

ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի¹ վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Նախագծի 1-ին կետի 2)-րդ ենթակետով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշման ամբողջ տեքստում և հավելվածներում «մասնագիտացված մանկատուն» բառերը փոխարինել «երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) տիպի հաստատություն» բառերով:

Մինչդեռ, Նախագծի 1-ին կետի 3)-րդ ենթակետով նախատեսվում է որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16)-րդ կետով. «բնակչության սոցիալական պաշտպանության 0-6 տարեկան երեխաների մասնագիտացված մանկատների մաքրիչ և սանիտարահիգիենիկ նյութերի տարեկան նվազագույն չափորոշիչները (մեկ խնամվողի հաշվարկով)՝ համաձայն N 16 հավելվածի»: Նշված արտահայտությունը համապատասխանաբար տեղ է գտել նաև Նախագծի թիվ 16 հավելվածի վերնագրում:

Նախագծում տեղ գտած ձևակերպումների հստակությունն ու միասնականությունն ապահովելու համար առաջարկում ենք Նախագծի 1-ին կետի 3)-րդ ենթակետում, ինչպես նաև թիվ 16 հավելվածի վերնագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

2. Նախագծի թիվ 21 հավելվածի 3-րդ մասում օգտագործվում է «հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթը, մինչդեռ նույն հավելվածի 5-րդ մասում նշված է «հաշմանդամ երեխաներ» եզրույթը:

Հարկ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Այս պարագայում «հաշմանդամ երեխաներ» արտահայտության մեջ «հաշմանդամ» բառն արտահայտում է «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացության իմաստը:

¹ Այսուհետ՝ Նախագիծ

Ուստի, առաջարկում ենք նշյալ հավելվածի 5-րդ մասում օգտագործվող «հաշմանդամ երեխաներ» եզրույթը փոխարինել «հաշմանդամություն ունեցող երեխաներ» եզրույթով:

3. Նախագծի 1-ին կետի 3)-րդ ենթակետում առաջարկում ենք «կետերով» բառը փոխարինել «ենթակետերով» բառով:
4. Նախագծի թիվ 21 հավելվածի 7-րդ մասում նշվում է, որ մինչև 200 խնամվող ունեցող կազմակերպությունների աշխատողների համար նախատեսվում է երկու, իսկ խնամվողների համար՝ երկու հեռախոսակետ: Մինչև 300 խնամվող ունեցող կազմակերպությունների աշխատողների համար նախատեսվում է երկու, իսկ խնամվողների համար՝ երկու հեռախոսակետ: Մինչդեռ, «մինչև 300 խնամվող ունեցող կազմակերպություն» արտահայտությունն արդեն իսկ ներառում է «մինչև 200 խնամվող ունեցող կազմակերպություն» արտահայտությունը:

Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, առաջարկում ենք Նախագծի թիվ 21 հավելվածի 7-րդ մասում կատարել համապատասխան փոփոխություններ:

5. Նախագծի թիվ 16 հավելվածի սյունյակի 4-րդ տողում նշված է «լվացքի փոշի ավտոմատ», իսկ թիվ 18 հավելվածի սյունյակի 2-րդ տողում նշված է «լվացքի միջոց automat կամ համարժեքը» արտահայտությունը:

Մինչդեռ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերում չի թույլատրվում օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը:

Ուստի, առաջարկում ենք Նախագծում տեղ գտած օտարալեզու բառերը փոխարինել հայերեն համարժեք բառերով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ